«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

18.03.2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Արամ Խաչատրյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80
E-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Խաչատրյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի ժամանակ Լոռու մարզի քանի՞ քաղաքացու և իրավաբանական անձի շարժական գույք է վնասվել: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով գույքի տեսակը (մակնիշը), քանակը, քաղաքացիների և իրավաբանական անձանց թիվը:***

2. Եթե կա 1-ին կետում նշված վնասված գույք, ապա վնասված գույքի դիմաց քաղաքացիները և իրավաբանական անձինք փոխհատուցում ստացե՞լ են: Եթե այո, նշել թե յուրաքանչյուրին ինչ չափով փոխհատուցում է տրամադրվել և ինչ վնասի դիմաց: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, գույքի տեսակի, վնասի չափի, փոխհատուցման գումարի չափի, ֆիզիկական և իրավաբանական անձանց:

3. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի ժամանակ Լոռու մարզի քանի՞ քաղաքացու և իրավաբանական անձի շարժական գույք է ոչնչացվել հակառակորդի կողմից, որը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով գույքի տեսակը (մակնիշը), քանակը, քաղաքացիների և իրավաբանական անձանց թիվը:***

Կանխավ շնորհակալություն *Դիմող՝ Գ. Բալասանյան*